

**Գյումրի քաղաքի Խրիմյան Հայրիկի Յա, Տա, Կբ և Ռ-ասկատյան 1  
բազմաբնակարան բնակելի շենքերի կենտրոնացված  
ջերմամատակարարման համակարգերի գործարկման ծրագիր**

ՄԱԶԾ/ԳԷՖ «Հայաստան. քաղաքային ջեռուցման և տաք ջրամատակարարման էներգաարդյունավետության բարձրացում» ծրագրի կողմից կատարվել են Գյումրի քաղաքի Խրիմյան Հայրիկի Յա, Տա, Կբ և Ռ-ասկատյան 1 բազմաբնակարան բնակելի շենքերի կենտրոնացված ջերմամատակարարման համակարգերի տեխնիկական վիճակի և դրանցից սնվող շենքերի բնութագրերի նախնական ուսումնասիրությունները: Արդյունքում պարզվել է, որ ոչ մեծ ներդրումներով կարելի է գործարկել համակարգը, այն դարձնելով էներգաարդյունավետ և սպառողների համար՝ մատչելի:

Ս.ք. հունիսի 25-ին Գյումրիի քաղաքապետարանի և ՄԱԶԾ/ԳԷՖ «Հայաստան. քաղաքային ջեռուցման և տաք ջրամատակարարման էներգաարդյունավետության բարձրացում» ծրագրի միջև ստորագրվել է Փոխըմբռնման հուշագիր, որի նպատակն է Գյումրիի քաղաքապետարանին աջակցել վերը նշված կենտրոնացված ջերմամատակարարման համակարգերի գործարկման համար: Հուշագրի շրջանակներում ՄԱԶԾ/ԳԷՖ Ծրագրի բյուջեից նախատեսվում է ֆինանսավորել անհրաժեշտ սարքավորումների ձեռք բերումն ու աշխատանքների իրականացումը:

ՄԱԶԾ/ԳԷՖ Ծրագրի կողմից պարզվել է, որ երկու համակարգերում էլ գործարկման և էներգաարդյունավետության բարձրացման համար անհրաժեշտ է իրականացնել հետևյալ աշխատանքները.

- ✓ գազի հաշվիչի տեղադրում,
- ✓ էլ. էներգիայի ծախսի նվազեցման նպատակով ցանցային պոմպերի փոխարինում,
- ✓ ընդարձակման անոթների, ջերմության ծախսաչափի և ճնշման ապահովիչ փականների տեղադրում,
- ✓ շենքերի ներքին ցանցերի կանգնակների վրա հիդրավլիկ բալանսավորման փականների տեղադրում,
- ✓ ջեռուցման արտաքին և ներքին ցանցերի հիդրավլիկական փորձարկումների անցկացում,
- ✓ խողովակազդերի և սարքավորումների ջերմամեկուսացում:

Աշխատանքների և սարքավորումների ձեռք բերման նպատակով 2007թ. օգոստոսին անց են կացվել մրցույթներ, որոնց արդյունքներով Գյումրի քաղաքի Խրիմյան Հայրիկի Յա, Տա, Կբ և Ռ-ասկատյան 1 բազմաբնակարան բնակելի շենքերի կենտրոնացված ջերմամատակարարման համակարգերի գործարկման համար պահանջվող ներդրումները գնահատվել են 90127 ԱՄՆ դոլար:

2007թ. սեպտեմբերին սկսվել են համակարգերի վերակառուցման աշխատանքները: Արդեն իսկ ավարտվել են կաթսայատանը տեղադրված սարքավորումների, ինչպես նաև բաշխիչ ցանցերում թերությունների վերացման և հիդրավլիկ փորձարկումների աշխատանքները: Ընթացքի մեջ են ներշնչային ցանցերում թերությունների վերացման և ջեռուցում չցանկացող սպառողների մարտկոցների համակարգից անջատման աշխատանքները:

ՄԱԶԾ/ԳԷՖ Ծրագրի կողմից իրականացվել են հարցումներ բնակչության շրջանում՝ կենտրոնական ջեռուցման համակարգին միանալու ցանկություն ունեցող սպառողների թիվը պարզելու համար: Այդ նպատակով հաշվարկվել է ջերմային էներգիայի նախնական

սակագինը և այդ սակագնի դեպքում Խրիմյան Հայրիկի 3ա, 5ա շենքերում ընդհանուր սպառողների 60%, իսկ Խրիմյան Հայրիկի 4բ և Ռ-ասկատյան 1 շենքերում ընդհանուր սպառողների 70% ցանկություն են հայտնել միանալ կենտրոնական ջեռուցման համակարգերին:

Գյումրի քաղաքի Խրիմյան Հայրիկի 3ա, 5ա և Խրիմյան Հայրիկի 4բ ու Ռ-ասկատյան 1 շենքերում կենտրոնական ջեռուցման համակարգի գործարկման համար պահանջվող ներդրումների և համակարգին միանալու ցանկություն ունեցող սպառողների թիվը պարզելուց հետո ՄԱԶԾ/ԳԷՖ Ծրագրի կողմից վերահաշվարկվել են ջեռուցման սակագները: Դրանք Խրիմյան Հայրիկի 3ա, 5ա և Խրիմյան Հայրիկի 4բ ու Ռ-ասկատյան 1 համակարգերում համապատասխանաբար կազմում են՝ 7.6 դրամ/կՎտժ և 7.9 դրամ/կՎտժ, կամ քառ.մ. հաշվարկով.երկու և երեք սենյականոց բնակարանների համար համատասխանաբար,

Խրիմյան Հայրիկի 3ա, 5ա համակարգի համար՝ 13000 և 18000 դրամ/ամիս և Խրիմյան Հայրիկի 4բ ու Ռ-ասկատյան 1 համակարգի համար՝ 13500 և 18700 դրամ/ամիս Դրանք նույնիսկ ավելի ցածր են, քան նախնական հաշվարկներով ստացված սակագները:

Նախատեսվում է համակարգերը գործարկել մինչև 2007-2008թթ. ջեռուցման շրջանի սկիզբը: